# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հոկտեմբերի 2022 թվականի N 1546 - Ա

## ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածը, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին և 8-րդ մասերը, «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 143-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և 145-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի համայնքապետարանի անունով ստացված, ապա «Հրաժարում՝ հօգուտ պետության» մաքսային ընթացակարգով 2022 թվականի հունիսի 28-ի թիվ 05100010/280622/0049170 ապրանքների հայտարարագրով ձևակերպված և պետական սեփականությանը փոխանցված 6 125 638 (վեց միլիոն հարյուր քսանհինգ հազար վեց հարյուր երեսունութ) դրամ ընդհանուր արժեքով գույքը՝ համաձայն հավելվածի, փոխանցել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը և վերջինիս կողմից՝ նվիրաբերության պայմանագրի հիման վրա, հանձնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

Թալինի համայնքապետարանին՝ Թալինի համայնքապետարանի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության մակարդակը մասնակի ապահովելու, ինչպես նաև Արցախյան առաջին և երկրորդ պատերազմներում զոհվածների և վիրավորների, 44-օրյա պատերազմի արդյունքում տեղահանված և Թալին համայնքում ապաստանած ընտանիքներին տրամադրելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին ու Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված ապրանքների հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 20-օրյա ժամկետում ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գույքերի նվիրաբերության պայմանագրերի կնքումը՝ դրանցում նախատեսելով դրույթներ գույքը Թալինի համայնքապետարանի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության մակարդակը մասնակի ապահովելու, ինչպես նաև Արցախյան առաջին և երկրորդ պատերազմներում զոհվածների և վիրավորների, 44-օրյա պատերազմի արդյունքում տեղահանված և Թալին համայնքում ապաստանած ընտանիքներին տրամադրելու նպատակով օգտագործելու, սույն կետում նշված պայմանները չպահպանելու դեպքում՝ նվիրաբերության վերացման հնարավորության մասին, ինչպես նաև գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

06.10.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ